ԻՆՉՊԵ՞Ս ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Տիգրան Սարգսյան

Մենք նախնառաջ պետք է հասկանանք հեղափոխություն սահմանումը: Հեղափոխություն բառը ծագել է ուշ լատինական *revolutio* ՝ շրջադարձ, հեղաշրջում բառից, որն ունի նաև բնության, հանրության կամ գիտակցության զարգացման խոր, որակական փոփոխության իմաստ: Հեղափոխությունը ենթադրում է որակական մեկ վիճակից մեկ այլ վիճակի թռիչքաձև անցում՝ իբրև բնության, հանրության կամ մտածողության զարգացման կարևորագույն օրինաչափության դրսևորում:

Ամեն անգամ, երբ հեղափոխություն սահմանումն օգտագործում ենք հասարակական գործընթացների առնչությամբ, մենք պետք է հասկանանք՝ որտե՞ղ է տեղի ունենում հետազոտվող հանրության կամ ավելի լայն իմաստով՝ օբյեկտի որակական փոփոխությունը: Ուկրաինական՝ «նարնջագույն», վրացական՝ «վարդերի» և ղրղզական՝ «կակաչների» հեղափոխության օրինակները ցույց են տալիս, որ երբեմն հեղափոխությունը հասկացվում է ոչ թե որպես հանրության վիճակի որակական փոփոխություն, այլ որպես իշխանության փոփոխում՝ հանրության ուժային ճնշման ներքո, և լայն հասարակության ուշադրության կենտրոնում ոչ թե նոր գաղափարախոսության, քաղաքականության, տնտեսության կամ, ավելի ստույգ, զարգացման գոյաբանության[1], այլ անհատի ու իշխանության ղեկին գտնվող խմբի հարցն է:

Այսպիսով, հաճախ ցանկանալով կատարել որակական փոփոխություններ՝ զանգվածները հանդես են գալիս հօգուտ հեղափոխության, ընդ որում՝ իշխանության հերթափոխի տեսքով, չգիտակցելով, որ իրականում

[1] Գոյաբանություն – դասական փիլիսոփայության մեջ՝ ուսմունք կեցության մասին, որ հանդես է գալիս իբրև փիլիսոփայական համակարգի բազային բաղադրիչ: Գ-ն համարժեք է մետաֆիզիկային իբրև կեցության մտահայեցողական համընդհանուր որոշարկումների համակարգի: Գ-ն, ըստ էության, արտացոլում է աշխարհի պատկերը, որը համապատասխանում է իրականության ճանաչման որոշակի մակարդակի և ամրագրվում է տվյալ դարաշրջանին, ինչպես նաև այս կամ այն փիլիսոփայական ավանդույթին բնորոշ փիլիսոփայական կատեգորիաների համակարգում: Այս իմաստով յուրաքանչյուր փիլիսոփայական և ընդհանրապես տեսական համակարգ անպայման հենվում է որոշակի գոյաբանական պատկերացումների վրա, որ կազմում են նրա կայուն բովանդակային հենքը և ենթարկվում փոփոխությունների իմացության զարգացմանը զուգընթաց- *ծան.՝ խմբ.:*

իրենց կարիքները, պահանջները գործողության այլ հարթություններում են և չեն կարող բավարարվել իշխանության հեղաշրջումային հերթափոխի օգնությամբ: Եվ իրականում, արդեն ի կատար ածված «հեղափոխությունից» որոշ ժամանակ անց հանրությունը հասկանում է, որ ունեցածի և ցանկալիի միջև տեղ գտած բացը լրացնելուն ուղղված փոփոխությունների շարժ տեղի չի ունենում, և իրավիճակը բարդանում է նաև իշխանության եկածների և իշխանությունից զրկվածների միջև քաղաքական մարտերով: Հետևաբար, դժվար է հեղափոխություն անվանել իշխանության այն հեղաշրջումային հերթափոխը, որը տեղի է ունեցել առանց կարիքների բավարարման իրական մակարդակի որակական փոփոխությունների, քանզի, իրականում, բեկում տեղի չի ունենում: Իշխանության են գալիս ուրիշ մարդիկ՝ հին գոյաբանական կերտվածքով, ինչը դժվար է համարել բեկում:

Ակնհայտ է, որ խոսելով հեղափոխության անհրաժեշտության մասին՝ հարկ է շեշտը դնել այնտեղ, թե որտեղ է բեկումը (նոր գոյաբանության հիման վրա), թե հեղափոխության արդյունքում ինչպիսի ինքնակազմակերպման որակական չափանիշներ և հանրության գործունեության մեխանիզմներ կփոխվեն, և ոչ թե այնտեղ, թե ինչ եղանակով ինչ-ինչ ուժեր եկել են կամ պետք է գան իշխանության և թե ինչ որակներ պետք է նրանց բնորոշ լինեն:

Նաև պետք է հասկանալ հեղափոխական գործընթացի էությունը՝ կանգ առնելով դրա բոլոր փուլերի վրա:

Հեղափոխական գործընթացի առաջին փուլն առավել քողարկված է և ենթադրում է հեղափոխական գաղափարի (նոր գոյաբանության) առաջացում: Նման գաղափար կարող է ծնվել մեկ մարդու գլխում կամ մարդկանց խմբում: Այդ գաղափարն անցնում է փորձաքննության որոշակի ճանապարհ, կուտակվում են գիտելիքներ, գալիս է գաղափարի իսկության որոշակի գիտակցում:

Մի փոքր շեղվենք և նշենք, որ մարդու էությունն իր հավատն է, հավատը Աստծո, իր, ազգի, գաղափարի, ապագայի նկատմամբ: Առանց հավատի մարդը վերածվում է վտանգավոր մի տարրի, որը քայքայում է հանրությունը, սպանում սիներգիզմը և ժխտում համակեցության կանոնները: Առանց հավատի հնարավոր չէ կառուցել ներդաշնակ հանրություն, քանզի ինքդ քեզ հետ համաձայնության գալն անհնարին է դառնում:

Գաղափարն այնուհետև տարածվում է ավելի լայն զանգվածների մեջ, սկսվում է նոր՝ հիմնականում ոչ ֆորմալ ինստիտուտների առաջացման գործընթաց (երկրորդ փուլ): Այդ ինստիտուտներում ձևավորվում է փոփոխությունների, զարգացումների գաղափարների ինստիտուցիոնալ հիշողությունը: Այստեղ պետք է հասկանալ, որ խոսելով նոր ինստիտուտների երևան գալու մասին՝ նկատի ունենք գոյաբանության նոր շրջանակներում

կերտվող նոր հարաբերությունների, նոր սուբյեկտների, նոր ձեռնհասությունների և գիտելիքների ծնունդը:

Այդպիսի ինստիտուտները վաղ թե ուշ անխուսափելիորեն հակասությունների մեջ են մտնում հին գոյաբանության շրջանակներում գործող ինստիտուտների հետ: Առաջ է գալիս հակամարտություն, ինչն էլ հանգեցնում է իրական բեկման (երրորդ փուլ): Եվ հենց այս բեկումն է, որ կապված է մարդկանց որոշակի խմբի կամային գործողությունների հետ, խումբ, որն ունի կամ ձեռք է բերում իշխանության լծակները, իսկ այդ գործողություններն ուղղված են դեպի փոփոխություն և զարգացում, ինչը, որպես կանոն, մենք անվանում ենք հեղափոխություն:

Ներկայացնենք մի սխեմա, որը ցույց կտա այն ամենը, ինչի մասին խոսեցինք (տե՛ս *Հավելված 1):*

Ակնհայտ է, որ հեղափոխություն կարելի է կատարել լոկ այն դեպքում, երբ հանրությունը պատրաստ է ընկալել նոր գոյաբանությունը, և մենք ակներևաբար հակասություն ենք տեսնում հանրության կազմակերպման ձևի ու բովանդակության միջև: Այդ հակասությունը կարող է հանդես գալ հետևյալ երկու սցենարներից մեկի դրսևորմամբ.

- առաջին սցենարը ենթադրում է հանրության այնպիսի բովանդակային փոփոխություն, որը պահանջում է դրա կազմակերպման ձևի փոփոխություն,
- երկրորդ սցենարը ենթադրում է հանրության կազմակերպման ձևի փոփոխություն, որը կբերի դրա բովանդակության փոփոխության:

Առաջին սցենարի էության բացահայտման համար մեջբերենք մի քաղվածք ժամանակին աղմուկ հանած Է.Թոֆլերի «Իշխանության փոխակերպություն» գրքից. «300 տարի առաջ արդյունաբերական հեղափոխությունը սկիզբ դրեց նյութական արժեքների ստեղծման նոր համակարգի գոյությանը: Գործարանային խողովակները վեր հառնեցին այնտեղ, որտեղ մի ժամանակ դաշտեր էին… Ի վերջո, ուր գալիս էին գոլորշու շարժիչները և գործարանային խողովակները, դրանց ամենուրեք հետևում էին քաղաքական փոփոխությունները: Քանդվում էին միապետությունները կամ պահպանվում էին միայն զբոսաշրջիկներին գրավող ծիսակատարները… Եթե հակիրճ խոսենք, նյութական արժեքների ստեղծման նոր համակարգի առաջացումը խարխլեց իշխանության հին համակարգի բոլոր հենակետերը՝ ի վերջո փոխելով ընտանեկան կենսաձևը, բիզնեսը, քաղաքականությունը, պետական կառուցվածքը և ընդհանուր առմամբ համաշխարհային իշխանակարգը… Նրանք, ովքեր պայքարում են ապագայի նկատմամբ հսկողության հասնելու համար,

գործադրել են ուժ, հարստություն ու գիտելիք»[1]:

Թոֆլերը ցույց է տալիս հանրության մինչինդուստրիալ կազմակերպման ձևից դեպի ինդուստրիալ հասարակություն որակական անցման գործընթացները՝ դիտարկելով դրանք հետմոդեռնիստական տեսության շրջանակներում: Նյութական արժեքների նոր համակարգի ծնունդն այստեղ հանդես է գալիս իբրև ուղենիշային գործընթաց, որն էլ հենց հրահրում է հեղափոխություն (բեկում):

Այս օրինակն առաջին սցենարի դրսևորումն է, որի պարագայում հանրության բովանդակային փոփոխությունը հանգեցնում է նրա կազմակերպության ձևի փոփոխության:

Երկրորդ սցենարի բովանդակալից բացահայտման համար կարելի է անդրադառնալ Հայաստանի նորագույն պատմությանը: Խոսքը Հայաստանում 1991թ. հեղափոխության մասին է, երբ հայ ժողովուրդը հրաժարվեց խորհրդային կայսրության շրջանակներում հանրության կազմակերպման սոցիալիստական ձևից՝ հօգուտ Հայաստանի անկախ պետության շրջանակներում հանրության կազմակերպման կապիտալիստական ձևի: Սակայն անկախության առաջին տարիները մեզ ակնհայտորեն ցույց տվեցին և ինչ-որ առումով մինչ օրս ցույց են տալիս, որ հանրությունը բովանդակային առումով պատրաստ չէր ընկալել ազատության ժողովրդավարական սկզբունքի հիման վրա կառուցված նոր գոյաբանությունը, որը կառուցված է ազատության սկզբունքի հիման վրա, որը նաև ենթադրում է, որ մեզանից յուրաքանչյուրն ինքն է պատասխանատու կայացրած որոշումների, սեփական կեցության և ապագայի համար:

Այսօր պետք է պատասխանենք մի հարցի (հատկապես նախընտրական գործընթացների աշխուժության պարագայում), թե ինչու Հայաստանում հեղափոխություն տեղի չի ունենում, ինչու նախընտրական մրցարշավում հասարակությունը լիովին անտարբեր է տեղի ունեցող քաղաքական գործընթացների նկատմամբ և փոփոխություններ կատարելու փորձ չի անում: Շարունակելով մտորումների այս շղթան՝ գալիս ես եզրահանգման, որ իրականում Հայաստանի Հանրապետության 15-ամյա գոյության ընթացքում ձևավորված կառավարչական համակարգի և հայ հանրության կարիքների ու պահանջների միջև հակասություն գոյություն չունի: Բացակայում է այն հասարարական խավը (կամ այն չի հասել այնպիսի վճռորոշ կետի), որը Հայաստանի զարգացման նոր գոյաբանության ձևավորման հիմք կհանդիսանար: Հանրության մեջ գերակա են հարմարվողականության տրամադրությունները, որոնք մասամբ բխում են օբյեկտիվ պատճառներից՝ պայմանավորված բնակչության աղքատության բարձր աստիճանով և

[1] *Թոֆլեր Է.,* «Իշխանության փոխակերպություն», 2004թ., էջ 32:

կրթության ցածր մակարդակով: Քաղաքականությունում հաճախ դիտվում է գաղափարախոսությունների ու ծրագրային մոտեցումների լիակատար բացակայություն, իսկ տնտեսությունում՝ առևտրի բուռն զարգացում, ինչն իբրև բազային գործընթաց բնորոշ է անգամ ոչ թե ինդուստրիալ, այլ մինչինդուստրիալ հասարակությանը: Այսինքն՝ անկախ պետությունը մեր էությունը չէ, մեր հանրության էությունը չէ:

Ի՞նչ է պետք անել, որպեսզի Մյունհաուզենի պես կարողանանք մենք ինքներս մեզ հանել ճահճից: Ակնհայտ է՝ հարկավոր է հեղափոխություն գիտակցության մեջ:

Հեղափոխություն գիտակցության մեջ. դա հայ հանրության նոր տեսիլի ձևավորումն է, որը դեռևս գոյություն չունի պատկերացումներում, որը, սակայն, իրագործելի է:

Մեր կարծիքով, կարելի է առանձնացնել երեք տարածություն:

Առաջին տարածությունը բարձրագույն մտքի դրսևորումն է (տրասցենդենտության տարածություն):

Երկրորդ տարածությունը պատմական իրադարձություններում տեղ գտած օրինաչափությունները բացահայտելն է, համաշխարհային ուղենիշային գործընթացներն առանձնացնելը, և դրա հիման վրա՝ *mainstream-ի* շրջանակներում ռացիոնալ հանրություն կառուցելը:

Երրորդ տարածությունն առասպելականն է, որտեղ գերակա դիրք են գրավում որոշակի դոգմաներ, որոնք վերածվում են վարքի կանոնների ու հանրության կառուցման սկզբունքների:

Մենք միշտ էլ ընտրություն ունենք, թե որ տարածությունում աշխատել:

Առաջին տարածությունում անհրաժեշտ է մտածողության տիպալոգիականացում և սեփական պարադիգմի մշակում (զարգացման գոյաբանություն): Պետք է հայտնվի որևէ առաջնորդ կամ մարդկանց մի խումբ, որոնք ոգեշնչված կլինեն և կունենան սեփական նախագծերի իրագործման անասելի ցանկություն:

Այդ առաջնորդը համոզում է, որ իր գաղափարները ճշմարիտ են և իրագործելի, և առաջնորդվելով գերագույն իմաստով՝ հանրությունը մոտեցնում է հեղափոխական փոփոխությունների: Նրա հիմնական ռեսուրսը անձնական համոզվածությունն է, որով և վարակում է շրջապատին: Շրջապատում սկզբում կուրորեն հավատում են նրան, հետո իրենք են դառնում այդ գաղափարների կրողները և սկսում ավելի մեծ զանգվածներ վարակել այդ գաղափարներով: Որպես հետևանք հանրությունում տեղի են ունենում որակական փոփոխություններ: Այդ ճանապարհով գնացել է Սինգապուրը:

Երկրորդ տարածությունը պահանջում է գիտելիքի ձեռքբերում և սեփական օրինակով գիտելիքի իրագործման ռազմավարության մշակում:

Այս տարածքում իրագործվում է հասցնող զարգացման պարադիգմը: Այսինքն, հիմնվելով զարգացած երկրների փորձին և արդյունքներին հասնելու եղանակների ուսումնասիրության վրա՝ մենք հարստացնում ենք մեր գիտելիքը, կատարում զանգվածային վերապատրաստում բոլոր մակարդակներում և ջանում ներմուծել *«best practice»:* Սակայն անում ենք ոչ թե զուտ ընդօրինակման ձևով, այլ բովանդակային փոփոխություններ կատարելով: Այս ճանապարհով է գնում ասօրվա Հայաստանը:

Երրորդ տարածքում մենք պետք է սեփական առասպելաբանությունը այժմեական դարձնենք: Այս տարածքում գիտելիք ենք վերցնում մեր սեփական պատմական անցյալից, ժողովրդի պատմական հիշողությունից, բացահայտում ենք մեր արժեքները, նորմերը, դոգմաները և ապրելակերպը, ապրում այդ կանոններով՝ անկյունաքար դարձնելով վարմունքի կանոնները: Իսկ զարգացումը հասկանում ենք որպես հանրության կառուցման սեփական առասպելաբանությունից վերցված սկզբունքների և կանոնների լիակատար ներմուծում: Այդ ճանապարհով գնում է Իրանը:

Ո՞ր ճանապարհն է ընտրում ընթերցողն այս երեքից:

Որպես օգնություն, մտածող մարդկանց համար, առաջարկում եմ հետևյալ վարկածը:

Վարկած՝ «Պատմությունը սկսվում է ապագայում»:

Թեզիս 1. Համաշխարհային պատմությունը ազգերի, ժողովուրդների ապագայի տեսիլի համար պայքար է: Հաղթանակում են միայն այն ազգերը, որոնք ի վիճակի են ստեղծել այդ տեսիլը, ի վիճակի են այն ճանաչել: Եվ աստվածայինն այն է, որ տեսիլը գալիս է և համակում ժողովրդին...

Թեզիս 2. Այս տեսիլը պետք է իրագործելի լինի: Եթե այն իրագործելի չէ, ապա այն տեսիլ չէ: Տեսիլի իրագործելիության նախապայմանն այն է, որ տեսիլը համակում է ընտրյալների ուղեղները, իսկ ընտրյալներն իրենց հետևից պետք է տանեն ազգին, ժողովրդին:

Թեզիս 3. Հաղթողների պատմությունը միշտ գրվում է ելնելով ապագայից: Պատմությունը միշտ վերիմաստավորվում է և վերաշարադրվում ապագայի տեսանկյունից: Պատմությունից հարկ է վերցնել այն, ինչն օգնում է առաջ գնալ, ինչն ապագայի տեսիլի մեջ է տեղավորվում: Անցյալի հետ աշխատելու ունակությունը ապագան կերտելու հնարավորություն է ստեղծում:

Թեզիս 4. Հայ հասարակության հիմնական խնդիրն այսօր այն է, որ մեզանում չկա ապագայի տեսիլի միասնականություն: Հասարակության

անջատվածությունը, որը բնույթով օբյեկտիվ է, կարող է հաղթահարվել միայն դեպի ապագան, այլ ոչ թե անցյալն ուղղված ձգտումով:

Թեզիս 5. Ընտրյալներ և առաջնորդներ կլինեն այն անձինք, որոնց այս տեսիլը երևան կգա, այն անձինք, որոնք համոզված կլինեն և կհավատան դրան և հանուն դրա կզոհաբերեն իրենց համար ամենաթանկը: Հետևաբար, իրենք կկարողանան մյուսներին էլ վարակել այդ տեսիլով: Ընտրյալները պետք է այսօր տեսնեն այդ ապագան և ապրեն դրանով: Եվ միայն այդ ժամանակ մյուսներն իրենց կհավատան և կգնան իրենց հետևից: Ոչ միանգամից, բայց կգնան: Դա հեղափոխության ճանապարհն է: Դա հեղափոխության էությունն է:

Թեզիս 6. Ակնհայտ է, որ այսօրվա իշխանությունների այլընտրանքի բացակայությունը կապված է այն բանի հետ, որ բացակայում է ապագայի տեսիլի այլընտրանքը: Իշխանության փոփոխության կոչերն ուղղված են դեպի անցյալ, այլ ոչ թե դեպի ապագա, և ոչ մի լավ բանի չեն հանգեցնի: Այսօրվա իշխանության այլընտրանքը կարող են լինել միայն նրանք, ովքեր կգնան հետևյալ սխեմայով. հավատ – ապագայի հստակ պատկերացում - այդ ապագայի առանցքային թեզիսների ճշտորոշ սահմանում:

Թեզիս 7. Անցյալի տարածքում աշխատելը նշանակում է կառուցել անցյալին հասնելու հայեցակարգ: Անցումային տնտեսություններում իշխանությունը դառնում է ոչ այլընտրանքային այն պատճառով, որ հասարակությունն ի վիճակի չէ միավորվել ապագայի տեսիլի շուրջ: Չկան լուրջ ինստիտուտներ, որոնք ի վիճակի են նախագծել ապագան:

Ընդ որում՝ աշխատել անցյալի հարթությունում և մրցակցել պետական կառույցների հետ հնարավոր չէ, քանի որ ռեսուրսային ներուժի տարբերությունն ակնհայտ է:

Թեզիս 8. Այսօր կառավարությունից բացի չկա մի կուսակցություն կամ հասարակական կազմակերպություն, որը կարող է առաջարկել երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ավելի գրագետ և ամբողջական ծրագիր: Եվ անկախ նրանից, թե ով կգա իշխանության գլուխ, այդ ծրագիրն այլընտրանք չի ունենա, քանզի այն գտնվում է *mainstream*-ի մեջ:

Թեզիս 9. Այլընտրանքը՝ մարտահրավեր է աշխարհին, հեղափոխություն է մտածողության մեջ, իսկ այդպիսի հերոսներ Հայաստանում չկան: Կան մարդիկ, որոնք իշխանության են ձգտում՝ ապագայի միակ, արդեն իսկ իրականացվող, նախագիծն իրագործելու համար: Հետևաբար, պայքարի

իմաստն էլ ոչ թե ապագայի, այլ արդեն իրագործվող նախագծի լավագույն իրագործման համար է: Ով էլ գա իշխանության գլուխ, կանի այն, ինչ արվում է արդեն այսօր, կգործի ավելի լավ կամ ավելի վատ, սակայն իրագործվող նախագիծը նույնը կմնա:

Այսպիսով, մենք պետք է հետ գանք դեպի պատմություն, վերիմաստավորենք այն, և լուծելով մեր ինքնաճանաչման հարցը՝ կառուցենք հայկական նոր հասարակություն: Մենք պետք է փոխվենք էությամբ, ոչ թե ձևով: Պահվածքին և կյանքին ներկայացվող կանոնները պետք է մեծամասնության համար լինեն ընդունելի, ցանկալի և կիրառելի: Մենք պետք է մեզ բարեհարմար և պաշտպանված զգանք շնորհիվ այն բանի, որ կարող ենք ինքնուրույն մշակել մեր կեցության նորմերը: Եվ միայն այդ դեպքում կարող ենք ասել, որ ահա սա է մեր հասարակությունը և մեր էությունը:

P.S. Մտածող մարդը միայն այն մարդն է, ով ձգտում է աշխարհի ամբողջական ընկալմանը:

Խելացի մարդն այն մարդն է, ով այդ հենքի վրա կարող է կանխորոշել ապագան:

Իմաստուն մարդն այն մարդն է, ով իր աշխարհընկալման հետ ապրում է ներդաշնակ:

Ապրիլ, 2007թ.

КАК ОСУЩЕСТВИТЬ РЕВОЛЮЦИЮ?

Тигран Саркисян

Резюме

Мы должны вернуться в историю, переосмыслить ее и, решив вопрос о самоидентификации, построить новое армянское общество. Мы должны измениться по сути, а не по форме; задаваемые каноны поведения и жизни должны быть приемлемы, желаемы и применяемы для большинства; мы должны чувствовать себя комфортно и защищенною именно благодаря тому, что в состоянии самостоятельно вырабатывать нормы бытия. Только тогда мы сможем сказать, что это есть наше общество и наша суть.

Հավելված 1

Բեկման սխեմա